«Մարզամշակութային
ներառական կենտրոն»
հասարակական
կազմակերպություն

«Inclusive sports and cultural
centre»
Non-gevermental organization

Общественная
организация
«Инклюзивный
спортивный и культурный
центр»

---

Հասցե՝ Ք. Գյումրի, Կուրղինյան 22

Գրություն 21
ՀՎՀՀ 05537315

Հեռ. 091 73- 99 -95
Կոնվերս բանկ, << Կումայրի>> մաս.
ՀՀ 1930061088180100
Էլ –փոստ՝ dilanyan.artyom.74@gmail.com

Գյումրու քաղաքապետ՝ պրն. Վարդգես Սամսոնյանին

Հարգելի պարոն Սամսոնյան

<< Մարզամշակութային Ներառական Կենտրոն>> ՀԿ-ն սույն թվականի մարտի 8--ին պատրաստվում է իրականացնել իր հերթական միջոցառումը՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոներին: Կազմակերպությունը ամեն տարի այս գեղեցիկ տոնը նշում էր Գյումրու տուն ինտերնատում հաշվառված ծեր տատիկների և հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հետ: Սակայն այս տարի խախտելով ավանդույթը մեր կենտրոնում կազմակերպելու ենք փոքրիկ միջոցառում, որին ներկա են գտնվելու արցախյան քառօրյա և 44-օրյա պատերազմներին նահատակված հերոսների թվով 30՝ մայրերի, քույրերի և կանանց: Հարգելի պարոն Սամսոնյան, քանի որ Կազմակերպությունը չունի մեծ հնարավորություններ, բայց կարողանում ենք մեր հնարավորությունների սահմաններում մեր թանկագին հյուրերի համար ձեռք բերել ծաղիկներ ու հուշանվերներ, ուստի խնդրում ենք Ձեր աջակցությունը թվով 30 հյուրերի հյուրասիրության ծախսի հարցում, որը կազմում է 60.000 հհ դրամ:
Նշենք, որ Մարզամշակութային ներառական կենտրոն ՀԿ-ն ունի արդեն մոտ 11 տարվա պատմություն: Այն հիմնադրվել է 2010 թվականի հուլիսի 7-ին Գյումրիում: Կազմակերպության առանցքային գործառույթներից է հանդիսանում հնարավորինս առավելագույն ձևով լուծել հաշմանդամություն ունեցող մարդկանց հիմնախնդիրները:
Իր պատմության ողջ ընթացքում այն իրականացրել է բազմաթիվ ծրագրեր: Կազմակերպությունը չի մոռանում ամեն տարի գրենականներ և պայուսակներ բաժանել բազմաթիվ երեխաների, սնունդով և վառելափայտով ապահովել տնակներում ապրող կարիքավոր ընտանիքներին:
Մեր կատարած աշխատանքներին կարող եք ծանոթանալ մուտք գործելով՝ << Մարզամշակութային Ներառական Կենտրոն>> ֆեյսբուքյան էջ:

**Մեկ անգամ ևս շնորհակալ ենք, որ Դուք կաք և մեր կողքին եք:**
**Կանխավ շնորհակալություն:**

ՀԿ-ի նախագահ՝ ______________ Արտյոմ Դիլանյան
**ՀԿ-Ի ծրագրերի ղեկավար՝ ______________ Անահիտ Կիրակոսյան**
**18.02.2022 թվ.**